

## ՆՎԻՐՎՈՒՄ Է ՇԱՅԱՅ ՄԵԾ ԵՂԵԶՆԻ ԶՈՒԵՐԻ ՌԻՇԱՏԱԿԻՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍԹԱՆ

Պատմական գիրությունների թեկնածու

## ՀԱՄԻԴՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՎ ԱԲԲԱ ՊԻԶԱՆԻՆ

XIX դարի 90-ական թթ. Օսմանյան կայսրությունում ծրագրավորված և իրականացված հայկական զանգվածային կոտորածները Ֆրանսիայում նշավակել են ոչ միայն անվանի քաղաքական, այլև կրոնական գործիչները: Հայերի ցեղասպանության հավաստի պատկերը բացահայտելու, համիլյան ջարդերին եվրոպական հասարակայնության իրազեկելու, ինչպես նաև արևմտահայության օգնության ձեռք մեկնելու ասպարեզում մեծ ավանդ է Աերդրել հայր Ֆելիքս Շարմետանը (1844-1921): Նա սակայն կաթոլիկ Եկեղեցու միակ նվիրյալը չէր, որը շանեքը է գործադրել ի պաշտպանություն հայ ժողովով: Բացի նրանից, արևմտահայության իրավունքների պաշտպանությամբ 90-ական թթ. հանդես է եկել նաև պատմաբաններին նվազ հայտնի մեկ այլ կրոնական գործիչ՝ աբբա Պիզանին, որի հայանպատ, սակայն շատ ավելի համեստ, քան նախորդի<sup>1</sup> շամադրությունը, չի արժանացել մասնագետների ուշադրությանը:

Ի դեպ, ամեկան քաղաքական կողմնորոշման և իրադարձություններին տված՝ երբեմն անընդունելի գնահատականների հանգամանքներից, Պիզանին ժամանակի ֆրանսիացի այն գործիչներից է (Ֆ. որ Պրեսամեն և ուրիշներ), որոնք կործանման դաստապարտված արևմտահայության ճակատագրի հանդեպ ի սկզբանե դրսնորել են անթաքուց մտահոգություն, մասնակցել Ֆրանսիայում Հայ դատին նվիրված հրապարակային դասախոսությունների<sup>2</sup>, համիլյան կոտորածներին առնչվող առաջին իսկ, դեռևս ոչ լիարժեք տեղեկություններն ստանալուն պես արձագանքել Օսմանյան կայսրությունում ծավալվող անցընթացին:

Արևմտահայության ճակատագրին նվիրված աբբա Պիզանիի առաջին հոդվածը հրատարակվել է 1895 թ.<sup>3</sup>, երբ Եվրոպայում դեռևս որևէ հատակ պատկերացում չունեին Արևմտյան Հայաստանի երկնակամարը շառագունած իրադարձությունների մասին: Հենվելով մատչելի, սակայն հաճախ անստուգ և նույնիսկ հակասական տեղեկությունների վրա, Պիզանին փորձում է Աերկայացնել օսմանյան լծի Աերք հեծող արևմտահայերի ծանր կացությունը XIX դ., վեր հանել դրա պատճառները և հպանցիկ ձևով ուրվագծել 1894-1895 թթ. տեղի ունեցածի համառոտ պատկերը:

Ինչպես ինքն է գործ, «մենց նոր բողոքի մի ալիք սահեց Եվրոպայի վրայով, և քաղաքակիրթ ազգերն իրազեկ դարձան բարբարոսական, վայրագ արարքների: Հազարավոր

<sup>1</sup> Տե՛ս E. Khayadjian, Archag Tchobanian et le mouvement arménophile en France, Alfortville, 2001, p. 78-83: Վ. Պողոսյան, Համիլյան կոտորածները և հայր Շարմետանը, «ՀՀմիածին», 2002, թիվ 1, էջ 72-80:

<sup>2</sup> Les Arméniens et la question arménienne. Conférence faite par M. Anatole Leroy-Beaulieu, membre de l'Institut à l'Hôtel des Sociétés savantes le 9 juin 1896, Paris, 1896, p. 2.

<sup>3</sup> P. Pisani, Les affaires d'Arménie, Paris, 1895.

քրիստոնյամեր թեծում են գարշելի լծի մերքը: Կըված հարկերից, ամենասարսափելի թշվառության եզրին հասած՝ մրանք ապարդյուն դիմում են դատարաններին, ուր պատեր են գումարում մրանց ամենատխերիմ թշնամիները: Նրանց, այսպիսով, մնում է լրել իրենց նախնիների հողը և բռնել տարագործյան տխուր ճանապարհը, որը նշանակում է այն մարդկանց դիակներով, ովքեր սովոր ու վատթար վերաբերմունքից կնքում են իրենց մահկանցուն»<sup>4</sup>:

Պիզանին իր հիմնական խնդիրն է համարում «հնարավորության սահմաններում նշանական մի մասի բացահայտումը և այդ հարցի կարևորության արժեկուրումը հավուր պատշաճի»<sup>5</sup>: Նա փորձում է ներկայացնել հայ ժողովրդի անցած պատմական ուղին մինչ Հայկական հարցի ծագումը՝ 1878 թ.: Պիզանին ուշադրությունը գլխավորապես կենորոնացնում է հայ ժողովրդի կյանքում հավատի և եկեղեցու ունեցած դերի վրա, որը պայմանավորված է օրա՝ իբրև հոգևորական գործի աշխարհը մկանան յուրահատկություններով:

Ի շարու այն հիմնահարցերի, որոնք օրա կողմից դարձել են մանրազնին քննության առարկա, առանձնացնենք մասնավորապես ժողովրդագրական գործոնը: Այս հարցում, ցավոք, սահմանափակվելով սոսկ ֆրանսիացի պատմաբան Վիտոլ Քիմեի՝ կայսրության տարածքում բանակվող ժողովրդագրական պատմաբան Վիտոլ Քիմեի՝ կայսրության տարածքում բանակվող ժողովրդագրական պատմաբան չաղերսակող եզրակացությունների: Հղելով Վերջինիս հաշվարկմերը, որն իր հերթին այդ տվյալները քաղել էր թուրքական սկզբանայրյուրներից (սալմաններ), Պիզանին պնդում է, որ Փոքր Ասիայում հայերը կազմում էին բնակչության մվազագոյն մասը, քանի օրանց թիվը՝ 13.5 միլիոնի հասնող բնակչության ընդհանուր թիվից հասնում էր 1.250.000-ի: «Ոչ մի տեղ, - գրում է նա, - քրիստոնյաների մեծամասնության չենք համեմատում: Վազի վիլայեթի հյուսիսում, ինչպես նաև Արդամայի վիլայեթի որոշ շրջաններում օրանց և մահմետականների թվաքանակը հավասար է: Ինչ վերաբերում է հայերին, ապա Քիթրիսի վիլայեթում օրանք կազմում են բնակչության մեկ երրորդը, իսկ Արդամայի վիլայեթում՝ մեկ քառորդը»<sup>6</sup>: Դեռ ավելին, ըստ Ռեդինակի, 1865-1878 թթ. հայկական բոլոր տարածքներում ապրող 2.5 միլիոն բնակիչներից միայն 0.5 միլիոնն էին հայեր<sup>7</sup>:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 5:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 6:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 19:

<sup>7</sup> Նույն տեղում: Այս առիթով հարկ է նշել, որ համաձայն պրոֆ. Ս. Համբարյանի հավաստի հաշվարկների, 1860-1870-ական թթ. Օսմանյան կայսրությունում կար շուրջ երեք միլիոն հայ, որից 2.5 միլիոնը բնակվում էին Արևմտյան Հայաստանում: Տե՛ս Ս. Համբարյան, Ազգարարակ հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914), Երևան, 1965, էջ 45; Թույաժ Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջ, «Բամբեր Երևանի համապարամ», 1969, թիվ 2, էջ 110: Քիմեի տվյալներն անընդունելի են համարում մաս ժամանակակից ամերիկանական պատմաբան Ս. Ա. Քարայանը, որը Արևմտյան Հայաստանի տարբեր ճամանակների բնակչության թվաքանակի շուրջ կատարել ամերիածախ ճշգրտումներ, մասմականական գշտում է: «Քիմեի քառահատոր՝ «Ասիական Թուրքիան աշխատությունը չի կարող դիմուլ իրու արժամանական տեղեկատվական սկզբանարդյուն»՝ Ասիական Թուրքիայի կենորոնական և արևելյան վիլայեթներում եղած հայ բնակչության համար: Այս չի կարող դիտվել նաև իբրև՝ ընդհանուր տեղեկատվական բնակչության արժամանական սկզբանադրյուն Արևմտյան Թուրքիայի հայերի համար 1880-ական թթ.՝ Տե՛ս S. A. Karayan, Vital Cuinet's *La Turquie d'Asie: A Critical Evaluation of Cuinet's Information about Armenians*, Journal of the Society for Armenian Studies (Michigan), 2000, vol. 11, p. 62.

Հենվելով այս թյուր տեղեկությունների վրա, արքա Պիզամին իր համոզմումը է հայտնում, որ հայերը կազմում էին «փոքրամասնություն Օսմանյան կայսրությունում, փոքրամասնություն քրիստոնյա ժողովուրդների թվում, փոքրամասնություն բոլոր վիլայեթներում և գրեթե բոլոր մարզերում»: «Ամրանգատություններ պատճառող» այս փոքրամասնությունը, սակայն, ինչպես նա նշում է, «ձգտում է անկախության, իսկ այդ ձգտումները սպառնալից են որքան մահմետականների, նույնան էլ քրիստոնյաների համար»<sup>8</sup>:

Ինչ վերաբերում է հայկական պատմական տարածքներում բնակվող քրիստոնյաներին սպառնացող՝ հայերից ենող կարծեցյալ վտանգին, Պիզամին առանց պարզաբանումներ տալու առ այդ՝ վերացականորեն հիշատակում է այն տարածայնությունների մասին, որոնք կյանքի էին կոչվել Լևանտի քրիստոնյաների (մասնավորապես հայերի ու հունացերի) միջև առկա դավանական տարբերությունների հետևանքով: Հայտարարում խնդրու առարկա հարցի մանրամասների վերլուծությունից ձեռնպահ մնացող հետինակի՝ քրիստոնյաների համար սպառնալիք ներկայացնող՝ հայերի ձգտումներին վերաբերող հայտարարությունը մնում է ճայն բարբառ անապատի: Փոխարեն՝ առ մանրամասնորեն քընարկում է (և դա նրա մոտեցման առավելությունն է) օսմանյան կառավարության քաղաքականության այլևայլ ելևէջներն ազգային փոխարաբերությունների կարգավորման ասպարեզում, բացահայտում մասնավորապես նրա անվճուական դիրքորոշումը ծայր առաջ խոռվությունները ճնշելու, վայրագությունները կանխելու և դրանց մեղավորներին պատժելու հարցում:

Պիզամիի համոզմամբ, թուրքն անփոյթ է և «գերադասում է հանդործել անկարգությունները, քան դրանք կանխել, ժխտում է վտանգի առկայությունը, որպեսզի այն վերացնելու հարկը չունենա... Նա անտարեկ է այն ամենի հանդեպ, ինչ տեղի է ունենում իր շուրջը»<sup>9</sup>: Ըստ նրա՝ թուրքերի թույլ տված զանցանքը հանգում է նախ և առաջ թողտվության: «Նրանց թողտվությամբ, որը հետևանք է կամ անտարերության, կամ արհամարիանքի, կամ անուշիմության, տեղի են ունեցել մեծ ապօրինություններ: Նրանք գործեն ոչինչ չեն արել դրանք վերացնելու համար, իսկ այս իրավիճակը մեկ օրվա պատմություն չէ, որ ունի»<sup>10</sup>:

Ծրջանցելով 1878 թ. դիվանագիտության քառուղիները միրճված Հայկական հարցի իրողությունը, Պիզամին այնուամենալիվ անուղակիրուեն անդրադառնում է թե՛ դրա նախապատմության հիմնական դրվագներին, թե՛ ծագման փուլերին: Թերևս հստակ պատկերացում իսկ չունենալով այդ հարցի բուն էության, անգամ գոյության մասին, նա դրան առնչվող հանգամանքների պարզաբանման խնդրում ցուցաբերում է հախոտն մոտեցում: Հայկական հարցի վերահսման համատեքստում կարելի է տեղադրել, օրինակ, սուլթան Արդուլ Մեշիդի՝ 1839 և 1856 թթ. հայերին շնորհած հրովարտակների քննությունը, թեպես հետինակը դրանք չի դիտում իբրև հարցի ծագման նախադրյալներ: 1839 թ. Գյուլիսանեի հաթթը-շերիֆով «Դուան ազդարարած՝ անկախ կրոնական զանազանությունից՝ բոլոր հապատակների՝ օրենքի առջև հավասարության սկզբունքը» Պիզամին իրավամբ համարում է ձևական: 1856 թ. հաթթը-հումայունին տված նրա գնահատականը ևս ընդունելի է:

<sup>8</sup> P. Pisani, Աշվ. աշխ., էջ 19:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 20:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 21:

Այս հրովարտակը «պարունակում էր միայն այն խոստումներ: Դրանում արձանագրված կրոնական հավասարությունը մնալով թղթի վրա, չի թափանցել բուն կյանքի ոլորտը»<sup>11</sup>, գրում է նա:

Պիզանիի հետագա շարադրանքը պարզորոշ վկայում է, որ նա չի ըմբռնել այն հրությունները, որոնք ժամանակի թելադրանքով՝ մեծ տերությունների դիվանագիտական մեքենայությունների հետևանքով, ծնունդ են տվել Հայկական հարցին: Հղելով, դիցուք, Սահմանադրության և Բնույթի վեհաժողովի պայմանագրերի՝ Արևմտյան Հայաստանին առնչվող հոդվածները, նա, որքան տարօրինակ է, անտեսում է դրանցում արձանագրված այն էական գանձագանությունը, որը կապված է արևմտահայության հանդեպ՝ Բարձր Դուռը պարտադրվող պարտավորությունների ի կատար ածման հարցում վերջինիս ստանձնած պատսպանատվության հետ (եթե առաջինը նախատեսում էր Դուռն հաշվետվությունը միայն Ռուսաստանի առջև, ապա երկրորդը՝ բարենորոգումների իրականացման հարցում սահմանում էր մեծ տերությունների վերաբնիկողությունը):

Նման պայմաններում, առավել ևս եթե նկատի ունենանք իրադարձությունների լուսարանան նրա որդեգրած մեկնակետոր, միանգամայն օրինաչափ է, որ Պիզանին Դուռ ստանձնած պարտավորությունների չկատարելը մեկնարանում է սուկ կրոնական հոդի վրա խարսխաված շարժադիրներով. «Մահմեդականների և քրիստոնյանների իրավահավասարությունն անհամատեղելի է մահմեդական կրոնական օրենքի հետ, որի վրա բարձրանում է թուրքիայի ողջ սոցիալական կառուցքը», - եզրակացնում է նա:<sup>12</sup>

Այս իրողությունը, ըստ Պիզանիի, վերջնականապես հուսախարում է հայերին և դրույմ գրանց ապստամբական գործողությունների: 1890-ական թթ. սկզբների հայ-թուրքական ընդհարությունն էրզրումում և Կոստանդնուպոլսում նա ըննարկում է Փոքր Ասիայում սկիզբ հայկական «տեղական կոմիտեների» գործությունն ինքնի վրա: Այս իրադարձությունների շուրջ ունենալով, սակայն, հակասական տեղեկություններ, նա ցավով արձանագրում է. «Ո՞վ երբեմ կիմանա ճշմարտությունը, երբ այդչափ մարդիկ շահագրգորված են այն շարշելու հարցում»<sup>13</sup>:

1894 թ. հովհանն Սաստում տեղի ունեցած «մշանավոր կոտորածներին», վերստիճա ստուգ տեղեկությունների սակավության պատճառով, Պիզանիի տված մեկնարանություններն աղոյ են ու ու մակերեսային: Անտեսելով հայերի ըմբռստության բուն պատճառները, նա նրանց ընդվզումը պայմանավորում է սուկ «ուն Համբարձումի» ծավալած նախապատրաստական աշխատանքով: Ինչ վերաբերում է կոտորածներին հաջորդած՝ եվրոպական տերությունների լիազոր մերկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովի հետաքննությանը, ապա Պիզանին դրա արդյունքները որակում է իբրև «մշուշապատ» և այդ իրողությունը պայմանավորում թե՝ հանձնաժողովի անդամների մոտեցումների զանազանությամբ, թե՝ «որոշ թուրք պաշտոնական մոտ անկեղծության բացակայությամբ»<sup>14</sup>:

Նշենք նաև, որ Պիզանիի հաճախ մակերեսային, անգամ իրականությանը չհամապատասխանող մեկնարանությունները Ֆրանսիայում չեն վրիպել ժամանակակիցների ուշա-

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 24:

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 26:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 28:

դրությունից: Մեկ տարի անց բարոն Կարա դը Վոն, համիլյան կոտորածներին նվիրված իր հրապարակային դասախոսության ընթացքում, տվել է Պիզամին նորվածի հետևյալ դիպուկ գնաճատականը. «Պ[արոն] Պիզամին Հայաստանի գործերի մասին խոսում է խորին իմացությամբ: Սակայն նրա հորվածի ընդունուր տողը, որը ներծծված էր այն ժամանակ դեռևս տիրապետող կասկածամտությամբ, հանրահայտ ճշմարտության առջև այսօր թվում է դժմի»<sup>15</sup>:

Այս հարցի կապակցությամբ որոշ պարզաբանումներ է տվել մասն Պիզամին 1896 թ. մայիսի 3-ին, Փարիզի Կաթոլիկական ինստիտուտում կայացած՝ հայկական կոտորածներին նվիրված իր հրապարակային դասախոսության ընթացքում. «Իրադարձությունները... ինչպես ինձ թվում է, ես ներկայացրել եմ ամենամակարդուն, Արևելքի գործերին՝ իմ իրազեկությունից բխող թերաբավաստությամբ: Ինձ հանդիմանել են պարտվածների հկատմամբ դժմի, զոհերի հանդեպ անողոք լինելու մեջ, սակայն մոռացել են, որ այն պահին, երբ ես գրում էի, զոհերը միայն այն անգույշ անձինք էին, ովքեր հրահրել էին դաժան բռնությունները: Ես կամխազգում էի, որ ամեն ինչ չէ, որ պարտին է հասցված, որ գրգռելով քամած վագրին, նրան կմիենք սարսափազդու արթմացման (ընդգծումը մերն է - Վ. Պ.), բայց ոչ մեկն այդ ժամանակաշրջանում չէր կարող ենթադրել քրիստոնյա ազգաբնակչության դեմ հյուսված զարդելի դավադրության մասին»<sup>16</sup>: Հեղինակի այս խոստվաճառության լուսի մերքը կարելի է ենթադրել, որ նա գիտակցարար լուրդուն է պահպանել իրեն արդեն հայտնի արյունալի անցքերի շուրջ՝ դրանց սաստկացմանը չնպաստելու դիտավորությամբ:

Իրադարձությունների սրբնութաց զարգացումը, հայկական կոտորածների ծավալումն ու դրանց արձագանքները Ֆրանսիայում զարկ են տվել Հայ դատի հանդեպ արքա Պիզամիի հետաքրքրության աճին, իսկ շարողերի անկողմնակալ պատկերն արտացոլող փաստաթղթերի որոշ հրապարակումներն օժանդակել են նրա իրազեկության ընդլայնմանը և նրան մղել համիլյան կոտորածների անսքոր պատկերը, մատչելի սկզբնադրյուրների ընձևած հնարավորության շրջանակներում, Աերկայացնելու իր ամբողջության մեջ: Այդ մասին է վկայում արդեն հիշատակված նրա հրապարակային դասախոսությունը, որը զգալիորեն տարբերվում է Զահարորդ ելույթից, քանզի ծանոթությունը 1896 թ. հայր Շարմենտանի կողմից հրատարակված «Հայկական նահատակությունն խորագիրը կրող փաստաթղթերի ժողովածուում»<sup>17</sup> զետեղված, ֆրանսիական և հայկական ծագում ունեցող վավերագրերի հետ, մեծապես նպաստել է կոտորածների ծավալի ու զոհերի թվի շուրջ նրա պատկերացումների հստակեցմանը:

Արքա Պիզամին Հայկական հարցը, որի գոյությունն արդեն ընդունում է, քննարկում է Օսմանյան կայսրության տարածքում և նրա սահմաններից դուրս տեղի ունեցած զանազան անցքերի լայն հետախործի վրա, բազմից մատնանշում Հումանատանում, Լիբանա-

<sup>15</sup> Les massacres d'Arménie. Conférence faite au salon Bibliographique le 9 mars 1896. Par M[onsieur] le baron Carra de Vaux, Paris, 1896, p. 4.

<sup>16</sup> L'abbé P. Pisani, Les massacres d'Arménie. Conférence faite à l'Institut Catholique de Paris le 3 mai 1896, Paris, 1896, p. 15.

<sup>17</sup> P[ère] F[elix] Charmetant, Martyrologe arménien. Tableau officiel des massacres d'Arménie dressé après enquêtes par les six ambassades de Constantinople et statistique dressée par des témoins oculaires, Paris, s. d.

նում, Բոլղարիայում տեղի ունեցած քրիստոնյա ժողովուրդների կոտորածները: Դա, անկանած, նրա դիրքորոշման կրած փոփոխության արտահայտությունն է: Այդուհանդեռձ, նա շարունակում է իրադարձությունները մեկնարաների խիստ սահմանափակ տեսանկյունից և համոզում հայտնում, որ դրանք ծնունդ են առել բացառապես կրոնական առճակատման հնոցում:

Օմանյան իշխանությունների կողմից քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ գործադրվող բռնությունները, տնտեսական կենքումը, կայսրության տարածքում նրանց համար արդարադատության բացակայությունը, օրինակ, նա քննարկում է միմյանց քրիստոնյաների և մահմետականների միջև առկա զանազանության, քրիստոնյաների հանդեպ վերջիններին ամբանուրժողականության համատեքստում: «Դպամի պատմությունը երկարաւուն նահատակության պատմություն է, որի ընթացքում արյունոտ տառերով միմյանց են շաղկապվել այն բոլոր քրիստոնյա ժողովուրդների անունները, որոնք կրված են մահմետականների տիրապետության մերքը», - գրում է նա<sup>18</sup>:

Ի շարու օսմանյան լծի մերքը գտնվող քրիստոնյաների, աբրա Պիզամին առանձնացնում է հայերին, որոնց և այլ ժողովուրդների ճակատագրերի միջև համեմատության իսկ եզրու չի տեսնում. «Դեռևս ստրկության մեջ գտնվող քրիստոնյա ազգությունների թվում չկա այնպիսին, որի ճակատագրին համեմատելի լինի հայերի ճակատագրի թետ», - նշում է նա<sup>19</sup>:

Հպանցիկ հայացք մետեղով հայ ժողովորդի պատմական զարգացման առանձնահատկությունների վրա, նա մատմանշում է մասմավորապես վաղուց ի վեր Հայաստանի անկախության կորուստը և փորձում վերլուծել այն պատճառները, որոնք XIX դ. վերջերին խոչընդոտում էին հայերին ձեռք բերելու բաղձալի ազատազրումն օսմանյան լծից: Այս հարցում ևս աբրա Պիզամին գերադասում է ճախապատվությունն անվերապահորեն տալ կրոնական գործոնին. ըստ նրա, դեռևս V դ. հայերը խզել են կրոնական բոլոր առնչությունները կաթոլիկություն դաշանող ժողովուրդների թետ և թետ «այդ կրոնական մեկուսացումը մեծապես նպաստել է քրիստոնեական տերությունների միջամտության հետաձգմանը»<sup>20</sup>:

Պիզամին շեշտում է հայերի վիճակը ծանրացնող ևս մեկ կարևոր համգամանք. Արևմտյան Հայաստանի տարածքում բնակվող տարրեր մահմետական ժողովուրդների և առաջին թերթին անհնազանդ քրդական ցեղերի թետ նրանց անմիջական հարևանությունը: Այս առիթով, հարկ է նշել, որ Պիզամին, ի տարբերություն ճախորդի եղութի, անդրադառնում է համիդին զորամիհավորումների կազմակորմանը և տալիս նրանց գործողությունների համառոտ, բայց ընդգրկուն գնահատականը, այն է՝ «ամենամար գորություններ, անհնազանդություն, անարգանքներ քրիստոնյաների հանդեպ, բռնի արարքներ, սպանություններ»<sup>21</sup>:

Այսպիսով, «հայերը, - ինչպես նա նշում է, - շարունակում էին ենթարկվել զավրելի բռնությունների, չնայած այն հստակ երաշխիքներին, որոնք արձանագրվել էին Բնովիաի

<sup>18</sup> L'abbé P. Pisani. Les massacres d'Arménie, p. 5.

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 8:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 9:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 12:

դաշնագրում»<sup>22</sup>: Ստեղծված իրավիճակում, ըստ արքա Պիզանիի, հայերին վիճակված էր ընտրել փակուղուց ելնելու միակ հնարավոր միջոցը՝ դիմել զենքի: Ուստի, տարբեր երկրներում նրանք հիմնում են կոմիտեներ և ձեռնամուխ լինում քարոզչական աշխատանքի, սակայն, նրա կարծիքով, «որքան նրանց կուսակցության ղեկավարները նման ծրագրեր էին կազմում, նույնքան ազգի հիմնական զանգվածը նվազ հակում ուներ զենք կրելու»: Միակ նշանակալից ըմբռաստությունը, որն այս անգամ ևս արժանացել է նրա ուշադրությանը, 1894 թ. Սատունում բռնկված ապատամբությունն է, որի ճնշումը հանգեցրել է «ջարդի»<sup>23</sup>:

1895 թ. հայերի կողմից բողոքի ցուցի կազմակերպումը կոստանդնուպոլսում արքա Պիզանի համարում է «վտանգավոր ուղու» ընտրություն, որն այդուհանդերձ որդեգրվել է, չնայած այն բանին, որ «Բոգևորականությունը, որի շարքերում կային շատ մեծ հայրենասերներ, բայց նաև զգուշ ու փորձառու անձինք, նման նախագծին վերաբերվում էր անհանգստությամբ»<sup>24</sup>: Ցուցին հաջորդած մի քանի օրերի ընթացքում, ինչպես նաև նշում է, «հայերը հետապնդվել են, կալանավորվել, կոտորվել... վայրագ ամբոխի և ոչ պակաս վայրագ ոստիկանության կողմից»<sup>25</sup>:

Հենվերվ հայր Օսրմետանի հրատարակած՝ վերը հիշված փաստաթղթերի ժողովածուում ամփոփված վավերագրերի վրա, արքա Պիզանի վկայակոչում է Հայաստանի տարբեր բնակավայրերում տեղի ունեցած հայկական շարդերո, թվարկում տարբեր վիլայեթներում զանգվածային կրօնափոխությանը, կանանց առևանգմանը, Բոգևորականների նկատմամբ գործադրված կտտանքներին, վաճերի և եկեղեցների կողոպտմանը վերաբերող փաստեր, ընդգծում եղեռնի իրականացման հարցում մահմեդական մոլեռանդ բնակչության, ոստիկանության և կանոնավոր բանակի զինվորների համագործակցությունը:

Արքա Պիզանին ընդունում է ջարդերի կանխամտածված բնույթը. «Հովմերին, - նշում է նա, - ամենուր խնայել են: Մեր առջև կուրացած ամբոխի վայրագությունները չեն հառնում. ո՞չ, կատարածուները գործել են ոչ թե տարերայնորեն, այլ նախօրոք ընտրել են և մատնացուց արել մահվան դատապարտվածներին»<sup>26</sup>: Կոտորածների իրականացման հարցում նա ընդգծում է թուրք փաշաների դերը, որոնք «քաջալերում էին վայրագություններ գործող մոլեռանդներին»: Դեռ ավելին, Պիզանին համիլյան կոտորածները դիտում է իրու պետական մակարդակով տեղի ունեցող իրադարձություն. «Կարելի է կարծել, - գրում է նա, - որ մի գաղտնագրված բանագնաց կտրել-անցել է երկիրը՝ հաղորդելով այս հրամանը (կոտորածներին վերաբերող - Վ. Պ.), որին յուրաքանչյուրն իր պարտք է համարում ենթարկվել: Նշմարելի է նաև, որ կոտորածները հաճախ սկսվել են ուրբաթ օրը, այնժամ, երբ մահմեդականները՝ սրբազն պատերազմի մի քանի մոլեգին կոչերով ոգեշնչված դուրս էին գալիս մզկիթից»<sup>27</sup>:

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>24</sup> Նույն տեղում էջ 13-14:

<sup>25</sup> Նույն տեղում էջ 14:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 17-18:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 17:

Այսուամենաբնիվ, պատասխանառութերին մերկացնելով հարցում գրա մեկնաբանությունները խստ մակերեսային են: Արձանագրելով, որ դրանից մեկ տարի առաջ ոչ մեկը չէր կարող «ենթադրել քրիստոնյա ազգության մկանամբ նման նողկալի դպրության» մասին, նա շատում է բացահայտել ինչ ժողովով ողերգության պատճառները: «Ասել են, գոել են, որ հայերի բնաշնչումը, որը Հայկական հարցի լուծման ամենից արմատական միջոցն է, նախապատրաստում է սովորակառությունը: Ես վարանում եմ ընդունել այդ կարծիքը: ...Հաս իս, բնաշնչման հրամանը կայսրական ապարանքից չի արձակվել, դա հավանաբար տրվել է ավելի բարձրից: Սովորանից վեր գտնվում են կրոնական եղբայրությունները, որոնք իսլամում ամենազոր են»<sup>28</sup>.

Այսպես, հայութափությունների քննարկումը պարփակելով սոսկ կրոնական առնակատման շրջանակում, նա, ցավոք, շնայած այդ ժամանակաշրջանում հրապարակված փաստաթյունների ընձեռած հնարավորությանը, ամկարող է գտնվել այդուհանդերձ հաղթահրելու իր իսկ հայացքների սահմանափակվածությունը և ցուցաբերելու համակղմանի մոտեցում: Հայութարարում դեռևս ամբողջությամբ չընկալելով Հայկական հարցին լուծում տպա՛՝ Արդու Համիդի նախընտրած տարբերակի էությունը, նա սովորանին ամբողջությամբ զերծ է պահել կոտորածների հարցում նվազագույն իսկ պատասխանատվությունից:

Պիզանին անդադառնում է նաև այն նյութական աշակեցությանը, որը հայր Շարմետանի շաճքերի շնորհիվ Ֆրամսիայում կազմակերպվել էր եղենմից մազապործ եղած հայերի օգտին<sup>29</sup>: Ջեռնպահ մնալով եվլուպական տերությունների կողմից արևմտահայության ճակատագրի հանդեպ դրսուրված անկարենից վերաբերմունքի համար նրանց հասցեին քննադատական խոսքեր ուղղելուց, նա կոչ է առում իր հայրենակիցներին՝ այդումնական և հայերին տրամադրել նյութական օգնություն:

Ինչպես տեսանք, աբբա Պիզանիի եղույթների միջն կան էական զանազանություններ, որոնք պայմանավորված են մեր կողմից վերն արդեն նշված հանգամանքներով: Դրանց թվում, ամկասկած, կարևորագույնը՝ նրա եղույթների միջամական շրջանում համեյան շարդերի սաստկացումն է, որի առիթով նա իր հրապարակային դասախոսության նզրափակիչ մասում հայտարարել է: «Այսպիսիք են այն ողերգությունները, որոնք Բենց նոր արյունաներկ են արել քրիստոնեական տարածքը: Նման դժբախսություններին ի տես, հարկ չկա խորհրդածելու, թե արդյոք զոհերն անզգուշ են եղել՝ գրգռելով իրենց կլանած հրեշին»<sup>30</sup>: Մեր համոզմամբ, Բենց այս հանգամանքն է դրդել աբբա Պիզանիի հայկական շարդերի շուրջ հանդես գալու շատ ավելի արմատական դիրքերից:

Անտարակուսելի է, որ աբբա Պիզանիի՝ Հայ դատին նվիրված եղույթները նպաստել են օսմանյան լծի ներքո տառապող հայ ժողովորի ողերգական կացության շուրջ Ֆրամսիայում հավաստի պատկերացման ձևակորմանը և հայանպատ շարժման ընդլայնմանը:

<sup>28</sup> Խոյս տեղում, էջ 16:

<sup>29</sup> Տե՛ս Վ. Պողոսյան, Աշվ. աշխ., էջ 79:

<sup>30</sup> L'abbé P. Pisani. Les massacres d'Arménie, p. 22.